ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՐԴԱԲԼՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

N - 031
«01» մարտի 2017թ.

ՀՀ Լոռու մարզպետ
պարոն Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն մարզպետ.

Կից Ձեզ եմ ներկայացնում Վարդաբլուր համայնքի ավագանու 27.02.2017թ. թիվ 12-Ն և 13-Ա որոշումները:

Առդիր՝ 6 թերթ:

Համայնքի ղեկավար՝ Ռ. Օհանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վարդաբլուր համայնք, գ. Վարդաբլուր,
093146149, vardablur.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» փետրվարի 2017 թվականի N 12 – Ն

## ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Վարդաբլուր համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Վարդաբլուր համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի :
2. Հաստատել 2016 թվականի Վարդաբլուր համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մանուկյան Կամո Հայազատի | [signature] | | |
| Պապոյան Կարեն Վասիլի | [signature] | | |
| Սահակյան Ներսես Պատվականի | [signature] | | |
| Վարդանյան Գեղամ Սուրենի | [signature] | | |
| Օհանյան Ստեփան Ռուբենի | — | — | — |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature, stamp] ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
2017թ. հունվարի 1-ի դրությամբ

(Հազար դրամ)

| | Հողի հարկ | Փ. միջոց. գույքահարկ | Շենք. և շինութ. գույքահարկ | Թույլտվութ. վճարներ | Հողի վարձավճար-ներ | Գույքի վարձակալ. | Տեղ. վճարներ | Այլ եկամուտներ | Պետական դոտացիա | Ընդամենը՝ եկամուտներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Նախատեսված | 5409.7 | 2786.7 | 10.0 | 144.0 | 1388.0 | 50.0 | 20.0 | 20.0 | 19422.5 | 29250.9 |
| Կատարված | 2962.6 | 2251.6 | 3.76 | 144.0 | 1285.0 | 50.0 | 0.0 | 0 | 19422.5 | 26119.5 |
| Կատար. % | 57.8 | 80.8 | 37.6 | 100 | 92.6 | 100 | 0 | 0 | 100 | 89.3 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ՕՀԱՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 2

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
2017թ. հունվարի 1-ի դրությամբ

(Հազար դրամ)

| | Աշխատավարձեր և հավելավճարներ | Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում | Դրամաշնորհներ | Սոցիալական օգնություն | Այլ ծախսեր | Ընդամենը՝ ֆոնդային բյուջե | Ընդամենը՝ ծախսեր |
|---|---|---|---|---|---|---|---|
| Նախատեսված | 13264.0 | 4455.0 | 6490.0 | 3100.0 | 1992.7 | 4043.7 | 33345.4 |
| Կատարված | 12039.3 | 3353.9 | 6214.9 | 2875.0 | 627.8 | 3662.6 | 28773.5 |
| Կատար. % | 90.8 | 75.3 | 95.8 | 92.7 | 31.5 | 90.6 | 86.3 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ՕՀԱՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 3

## ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2016 թվականի ծրագրերն են.

- Մշակույթի տան վերանորոգում
- Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում
- Խմելու ջրի ցանցի հիմնանորոգում

**Համայնքի քառամյա զարգացման ծրագրով նախատեսված 2016 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.**

Մշակույթի տանը կատարվել է մասնակի վերանորոգում, վերանորոգվել է նախասրահը, առանձնացվել և վերանորոգվել է խոհանոցը, սանհանգույցը: Վերանորոգված տարածքը կծառայի որպես հանդիսությունների և արարողությունների սրահ: Խճապատման եղանակով բարեկարգվել են ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների որոշակի հատվածներ, պարբերաբար կատարվել են նաև խմելու ջրի ցանցի նորոգման աշխատանքներ: Սոցիալական օգնություն է տրամադրվել սոցիալապես անապահով ընտանիքների, մահացածների և նորածին երեխաների ընտանիքներին տրամադրվել է միանվագ դրամական օգնություն, կազմակերպվել են տարբեր միջոցառումներ, համայնքի մանկապարտեզին, դպրոցին, բժշկական ամբուլատորիային, եկեղեցուն տրամադրվել է դրամաշնորհ: Իրագործվել է աղբահանության աշխատանքները, Կենտրոնական փողոցի և Սարի թաղի գիշերային լուսավորությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վարդաբլուր համայնք, գ. Վարդաբլուր,
093146149, vardablur.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» փետրվարի 2017 թվականի N 13-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻՑ 255 000 ԴՐԱՄ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Վարդաբլուր համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 038-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Վարդաբլուր համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:

2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մանուկյան Կամո Հայազատի | | | |
| Պապոյան Կարեն Վասիլի | | | |
| Սահակյան Ներսես Պատվականի | | | |
| Վարդանյան Գեղամ Սուրենի | | | |
| Օհանյան Ստեփան Ռուբենի | | | – |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ

Հավելված

ՀՀ Լոռու մարզի

Վարդաբլուր համայնքի ավագանու

2017 թվականի փետրվարի 27-ի N 13-Ա որոշման

# ՑՈՒՑԱԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Մանուկյան Ռուզաննա - 50 000 դրամ
2. Իսրայելյան Շողիկ - 50 000 դրամ
3. Պողոսյան Բուրաստան - 50 000 դրամ
4. Սահինյան Հերմինե - 30 000դրամ
5. Չիլինգարյան Հայաստան - 30 000 դրամ
6. Նիկողոսյան Օֆիկ - 30 000 դրամ
7. Պողոսյան Հովհաննես - 15 000 դրամ

Ընդամենը՝ - 255 000 դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ